6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2018 թվականը:

6.2 Սույն պայմանագրի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել.

ա / կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի կողմից սույն պայմանագրի պայմանների էական խախտում (խախտումներ) թույլ տալու դեպքում,

բ/ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման նախատեսվող օրվանից առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայամանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Մատակարարման մնացած պայմանները, որոնք չեն նախատեսված սույն պայմանագրով կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

8.2 Կողմերի միջև սույն պայմանագրի մեկնաբանման և կատարման կապակցությամբ առաջացած վեճերը լուծվում են փոխադարձ քննարկումների և բանակցությունների միջոցով, իսկ դրանցում հաջողության չհասնելու դեպքում՝ դատական կարգով:

8.3 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկը տրվում է Գնորդին, մյուսը՝ Մատակարարին:

Մատակարար	Գնորդ
«ՍՍՆ» ՍՊԸ	«Վանաձորի Ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Վարդանանց փ. շ.84, բն.74	Ք Վանաձոր, Սևակի 51
«Ինեկոբանկ» ՓԲԸ	Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Լոռի» մ/ճ
Հ/Հ 2050222132221001	Հ/Հ 220055140192000
ՀՎՀՀ 06953248	ՀՎՀՀ 06902113
հեռ. /37498/ 333257 098333257	Հեռ. 0322- 2-86-04 , 4-86-03
Տնօրեն Ա.Արդարյան	Տնօրեն Ռ. Չիլինգարյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.